

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՍԱՐՈՅԱՆ ՊԱՐԳԵՎ ՎՈԼՈԴՅԱՅԻ**

**ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒ ՑՈՒՄԸ**

**ԺԲ.00.02. - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մուկնիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, աբտական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման արեւախոսություն**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ 2016**

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**

**САРОЯН ПАРГЕВ ВОЛОДЯЕВИЧ**

**ВОЗМЕЩЕНИЕ ВРЕДА ПРИЧИНЕННОГО АДМИНИСТРИРОВАНИЕМ**

**АВТОРЕФЕРАТ**

**Диссертация на соискание ученой степени кандидата  
юридических наук по специальности**

**12.00.04. – “Публичное право –“конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление”**

**ЕРЕВАН 2016**

Ատենախոսությունների թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու , դոցենտ Ռ. Յ. Եղյան  
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր , պրոֆեսոր Գ. Բ. Դանիելյան  
իրավ. գիտ. թեկնածու , դոցենտ Թ. Ա. Շաքարյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիա

Ատենախոսությունն պաշտպանությունը կայանալու է 2016թ. հունիսի 13-ին, ժամը 12<sup>00</sup>-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՅ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2016թ.-ի հունիսի 9-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղարի պաշտոնակատար , իրավ. գիտ. դոկտոր , պրոֆեսոր Վաղարշյան

Ա. Գ.

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: кандидат юридических наук, доцент Р. А. Егиян

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор Г. Б. Даниелян  
кандидат юридических наук Т. А. Шакарян

Ведущая организация: Академия государственного управления РА

Защита состоится 13-ого июля 2016г. в 12<sup>00</sup> часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 9-ого июня 2016г.

Ученый секретарь специализированного совета, доктор юридических наук, профессор

А. Г. Вагаршян

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԼ ԹՅԱՆ ԸՆԴՊԱՆՈՒԼ Ի ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

**Ասե նախտ սու թյ ան թե մայ ի արդիակ անու թյ ու նը: 33**

սահմանադրու թյ ան 3-րդ հոդվածը հռչակում է, որ Հայաստանի Հանրապետության նույն մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությանը իր իրավունքների և ազատությանը անքակտելի հիմք է: ՀՀ սահմանադրու թյ ան նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությանը հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

Սահմանադրական հիշյալ նորմը պետության առաջնահերթ պարտականություններից մեկն է համարում մարդու հիմնական իրավունքների և ազատությանը պաշտպանությունը: Նշված խնդրի լուծումն առավելապես կարևորվում է այն դեպքերում, երբ մարդու իրավունքները և ազատությունները խախտվել են պետական մարմինների և (կամ) դրանց պաշտոնատար անձանց անօրինական գործողությունների կամ անգործության հետևանքով: Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության գլխավոր խնդիրներից մեկը պետք է լինի հենց պետական մարմինների գործողությունների արդյունքում անձանց խախտված իրավունքների վերականգնումը: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության հետևանքով վնաս կրած անձանց՝ վնասի հատուցում ստանալու իրավունքն ամրագրվեց սահմանադրական բարեփոխումների արդյունքում:

Պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքի իրականացումը երաշխավորող լիարժեք օրենսդրական կարգավորումների առկայության անհրաժեշտությունը դարձել է հրատապ խնդիր: Ասվածն ամբողջական է դառնում այն համատեքստում, որ պետական մարմինների կողմից իրենց վերապահված այս կամ այն լիազորության իրականացումն արդեն իսկ կարող է անձի համար առաջացնել որոշակի անբարենպաստ հետևանքներ, սակայն դրանց առաջացման վտանգը չի կարող հիմք լինել տվյալ լիազորության իրականացումից հրաժարվելու համար: Վնասի պատճառման հնարավորությունը չի կարող բացառել վարչարարության իրականացումը, ուստի վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքի իրական

պաշտպանությունը պահանջում է օրենսդրական գործունե կառուցակարգերի ամրագրում:

Նշված հարցի կապակցությամբ ՀՀ գործող օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ գործող կարգավորումները միանշանակ չեն: Մասնավորապես՝ հարցը գուճահեռ կարգավորման է ենթարկվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով: Դրաարդյունքում առաջանում է մի իրավիճակ, երբ հստակ չէ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործողություններով կամ անգործությամբ պատճառված վնասի հատուցման պահանջների առարկայական ընդդատության հարցը: Որպես դրատրամաբանական ու անխուսափելի հետևանք՝ հակասական է նաև ՀՀ-ում ձևավորված դատական պրակտիկան, քանի որ ընդհանուր իրավասության դատարանները երբեմն քննում և լուծում են այնպիսի վնասի հատուցման վերաբերյալ գործեր, որի առաջացման հիմքը գտնվում է հանրային իրավունքի շրջանակներում, և, ըստ այդմ, առկա է լինում հանրային իրավահարաբերություններից բխող վեճ: Մինչդեռ ՀՀ վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներով արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավահարաբերությունների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը կիրառելի չէ: Այս համատեքստում անհրաժեշտ է հստակ տարբերակում կատարել ընդհանուր իրավասության դատարանի և վարչական դատարանի իրավասության միջև՝ սահմանելով այն չափանիշները, որոնցով պետք է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որոշվի առարկայական ընդդատությունը:

Առկա կարգավորումները կարելի է թերի համարել նաև այն առումով, որ չեն սահմանում վնասի հատուցման լիարժեք ընթացակարգ. վնասի հատուցում տրամադրելու ընթացակարգը սահմանող իրավանորմերով տրված կարգավորումն անարդյունավետ է այն առումով, որ առանձին դեպքերում կարող է վնաս պատճառած վարչական մարմինն զրկել սեփական գործողություններով վնասի հատուցում տրամադրելուց: Խնդիրը վերաբերում է նրան, որ վիճահարույց է վարչական մարմինների կողմից վարչարարության հետևանքների վերացման, վնասի հատուցման վերաբերյալ վարչական ակտերի փաստացի կատարման և մի շարք այլ հարցերի կանոնակարգումը:

Ատենախոսության մեջ բարձրացված այս և բազմաթիվ այլ հարցերի արդյունավետ լուծմանն ուղղված առաջարկների

ներկայացման անհրաժեշտություները պայմանավորում է սույն հետազոտության արդիականությունը:

**Յեռագոտության թեմայի մշակվածության աստիճանը:**

Հանրային իշխանության իրականացմամբ պատճառված վնասի հատուցմանն առնչվող խնդիրներն ուսումնասիրման են ենթարկվել տարբեր հեղինակների կողմից: Այս հարցերի վերաբերյալ հրատարակված աշխատություններում որոշակի թիվ են կազմում նաև ատենախոսությունները:

Պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության հետ կապված հարցերի հետազոտմանն ուղղված աշխատությունների մեջ կարելի է հիշատակել Գ. Դանիելյանի, Ն. Այվազյանի, Ռ. Եղյանի, Ս. Ս. Ալեքսեևի, Կ. Բ. Յառոշենկոյի, Ա. Ա. Պոդոպրիգորայի, Ա. Լ. Մակովսկու, Ե. Պ. Չեռնովոլի և այլոց աշխատությունները:

Սակայն հարկ է նկատել, որ, չնայած ռուսական աղբյուրներում խնդրո առարկա թեմայի տեսական մշակումներին, հայրենական իրավաբանական գրականության մեջ բացակայում է վարչարարությունից պատճառված վնասի հատուցման ինստիտուտը համակողմանի ուսումնասիրման ենթարկած աշխատություն:

**Յեռագոտության օբյեկտը:**

Յեռագոտության օբյեկտ են հանդիսանում վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում ստանալուց բխող նյութափրավական և դատավարական հարաբերությունները:

**Յեռագոտության առարկան:**

Յեռագոտության առարկա են հանդիսանում վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում ստանալու կարգը սահմանող նյութափրավական և դատավարական նորմերը, ինչպես նաև դրանց կիրառման պրակտիկան:

**Յեռագոտության նպատակը և խնդիրները:**

Յեռագոտության նպատակը վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը կարգավորող իրավանորմերի և պրակտիկայի կատարելագործման նպատակով համապատասխան առաջարկներ մշակելն է: Այդ նպատակի իրագործումը պահանջում է հետևյալ խնդիրների լուծումը.

1) հստակեցնել պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից պատճառված վնասի հատուցման նորմատիվ հիմքը,

2. սահմանել վարչարարությունը ամբ պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման փաստական հիմքն ու պայմանները,

3. բացահայտել նորմատիվ իրավական ակտերի ընդունմամբ եզրափակվող գործունեության՝ որպես վարչարարության իրականացմամբ հասցված վնասի հատուցման առանձնահատկությունները,

4. առանձնացնել վարչարարությունը ամբ պատճառված վնասի հատուցման ընթացակարգի նյութաիրավական և դատավարական կողմերին առնչվող տեսական և գործնական բնույթի հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման տարբերակներ:

**Յետազոտության տեսական հիմքը:** Յետազոտության համար որպես տեսական հիմք են ընդունվել վարչարարությունը ամբ պատճառված վնասի հատուցմանն առնչվող առանձին հարցերի վերաբերող հայրենական և արտասահմանյան տարբեր հեղինակների աշխատությունները: Այդ հեղինակների թվում կարելի է նշել Գ. Դանիելյանին, Ն. Այվազյանին, Ռ. Եղյանին, Գ. Մուղնեցյանին, Տ. Բարսեղյանին, Ն. Ռ. Սկոբիչկինային, Օ. Վ. Միխայլենկոյին, Ա. Լ. Բուրկովին, Ս. Վ. Նիկիտինին և այլ հեղինակների:

**Յետազոտության իրավական և փորձառական հիմքերը:** Յետազոտության ընթացքում ուսումնասիրման են ենթարկվել և վերլուծվել ՀՀ և արտասահմանյան երկրների՝ պետական մարմինների և դրանց պաշտոնատարանձանց կողմից պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերը: Բացի այդ, հետազոտվել են թեմային առնչվող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները, ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի, վերաքննիչ դատարանի և առաջին ատյանի դատարանի դատական ակտերը:

**Յետազոտության մեթոդաբանական հիմքը:** Յետազոտության ընթացքում կիրառվել են ինչպես ընդհանուր գիտական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի և այլն, այնպես էլ մասնավոր գիտական՝ իրավահամեմատական, համակարգակառուցվածքային և այլ մեթոդներ:

**Յետազոտության գիտական նորույթը:**

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում և ատենախոսության եզրակացության մեջ հեղինակի կողմից կատարված տեսական ընդհանրացումներում և գործնական բնույթի առաջարկություններում:

## **Պաշտպանության ներկայացվող դրույթներն են՝**

1. Ներկայումս գործող իրավակարգավորման համաձայն՝ նորմատիվ ակտն անվավեր ճանաչելու մասին ՀՀ վարչական դատարանի որոշումն այն դեպքերում, երբ դրան հետադարձ ուժ չի տրվում, հիմք է նորմատիվ ակտի իրավաչափության ստուգման հարցով դիմած և այն անձանց վերաբերյալ ընդունված միայն անբողոքարկելի չդարձած վարչական ակտերի անվավեր ճանաչման համար, ովքեր վարչական դատարանի որոշման հրապարակման օրվա դրույթամբ պահպանում են նույն հարցով դատարան դիմելու իրավունքը: Մենք գտնում ենք, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված այդ իրավակարգավորումը վերանայման կարիք ունի, քանի որ այն նորմատիվ ակտի իրավաչափության վիճարկման գործով դատական ակտի ազդեցությունը սահմանափակում է միայն անբողոքարկելի չդարձած վարչական ակտերի շրջանակով՝ անտեսելով օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը: Ուստի աշխատանքի մեջ փորձ է արվել հիմնավորելու, որ բեկանման ենթակա պետք է լինեն նաև նորմատիվ ակտի՝ անվավեր ճանաչված դրույթի վրա հիմնված և վարչական դատարանի դատական ակտի հրապարակման պահի դրույթամբ օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը:

2. Վարչական մարմինների կողմից նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի շարունակական ոչ իրավաչափ կիրառմամբ անձանց խախտված իրավունքների պաշտպանությունը գործունե դարձնելու անհրաժեշտությունից ելնելով՝ աշխատանքի մեջ առաջարկվել է վարչական դատարանին վիճարկվող նորմատիվ ակտի բովանդակությունը բացահայտելու լիազորություններ ավերապահել: Որպես նշված առաջարկության շարունակությունն՝ հիմնավորվել է այն հանգամանքը, որ այդ լիազորության կիրառմամբ ընդունված վարչական դատարանի որոշումը հիմք կդառնա ինչպես վիճարկվող դրույթի սխալ կիրառմամբ ընդունված վարչական ակտերի վերանայման, այնպես էլ այդ դրույթի հետագա իրավաչափ կիրառման համար:

3. Անձինք կարող են վնաս կրել ոչ միայն նորմատիվ ակտի դրույթի կիրառման, այլև իրենց իրավաչափ գործողություններով դրա իրացման արդյունքում: ՀՀ օրենսդրությունը չի պարունակում դրույթ, որը հնարավորություն կտար նորմատիվ ակտն անվավեր ճանաչելու մասին որոշմանը հետադարձ ուժ տրվելու դեպքում ստանալու նորմատիվ ակտի անմիջական իրացման հետևանքով կրած վնասի

հատուցում: Վարչական դատարանի որոշմանը հետադարձ ուժ տալը հնարավորություն է տալիս ստանալ ու միայն նորմատիվ ակտի կիրառմամբ պատճառված վնասի հատուցում, իսկ անվավեր ճանաչված նորմատիվ ակտի իրացմամբ պատճառված վնասի հատուցմանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը չի անդրադարձնում: Անհրաժեշտ համարելով դատավարական օրենքով նշված հարցի սպառիչ կարգավորումը՝ ատենախոսության մեջ առաջ է քաշվել այն գաղափարը, որ այդպիսի դեպքերում անձի իրավունքների պաշտպանության եղանակը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 111-րդ հոդվածի հիման վրա վարչական մարմնի տիրապետմանն անցած գույքը վերադարձնելու պահանջ ներկայացնելն է՝ որպես անհիմն հարստացում:

4. Հաշվի առնելով օրենսդրական ակտով ուղղակիորեն նախատեսված հարցի կարգավորման առնչությամբ ենթաօրենսդրական ակտ չընդունելու անգործության արդյունքում անձանց խախտված իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը՝ աշխատանքի մեջ հիմնավորվել է, որ նպատակահարմար է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով որպես գործողության կատարման հայցի առանձին առարկա սահմանել նորմատիվ իրավական ակտ ընդունելու և վարչական մարմնին պարտավորեցնելը, իսկ որպես ճանաչման հայցի առանձին առարկա՝ նորմատիվ իրավական ակտ չընդունելու ձևով դրսևորվող անգործությունը՝ ոչ իրավաչափ ճանաչելը:

5. Ատենախոսության մեջ հիմնավորվել է այն գաղափարը, որ վարչական մարմնի կողմից վնասի հատուցման դիմումը սահմանված ժամկետում չքննարկվելը պետք է մեկնաբանվի որպես վերջինիս կողմից վնասի հատուցումից հրաժարում: Նման պայմաններում, որպեսզի վնասի հատուցման վերաբերյալ վարչական վարույթի հարուցումը և իրականացումը չհամարվեն վնասի հատուցման համար անհրաժեշտ պայմաններ, և անձի խախտված իրավունքների վերականգնման գործընթացը չդառնա անարդյունավետ, առաջարկվել է օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություն կատարել և անձին դատական կարգով անմիջականորեն վնասի հատուցում պահանջելու հնարավորություն վերապահել նաև վարչական մարմնի կողմից վնասի հատուցման վերաբերյալ դիմումը չքննարկվելու դեպքում:

6. ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ, թե ինչպես պետք է կատարվի վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտը: Ներկայումս սահմանված կարգը վերաբերում է միայն



բյուջեից գումարի բռնագանձում նախատեսող դատական ակտերի կատարմանը, իսկ վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցումն իրականացվում է վարչական ակտով, որի կատարման վերաբերյալ կարգավորում նախատեսված է: Այդ կապակցությամբ առաջարկվել է վարչական ակտի հիման վրա վնասի հատուցում տրամադրելու լիազորությունը վերապահել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ նաև հաշվի առնելով այն, որ պետական բյուջեից անմիջական բռնագանձում նախատեսող դատական ակտերի կատարման կարգը խիստ անարդյունավետ է, և նպատակահարմար է այն կիրառել վնասի հատուցման վերաբերյալ վարչական ակտերի նկատմամբ:

7. Քանի որ վարչարարության հետևանքների վերացումը գուտ միայն վարչական ակտի ընդունման միջոցով շատ հաճախ կարող է անհնարին լինել և երբեմն վարչական մարմնից պահանջում է տարաբնույթ գործողությունների կատարում, աշխատանքի մեջ հիմնավորվել է վարչարարության հետևանքների վերացումը գործնականում հնարավոր դարձնելու նուղղված օրենսդրական փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը, և այդ կապակցությամբ ներկայացվել է համապատասխան առաջարկություն:

8. Որոշակի դեպքերում անձի համար բարենպաստ վարչական ակտով վերջինիս իրավունքների խախտման հնարավորությունը և, հետևաբար, բարենպաստ վարչական ակտերով խախտված իրավունքների վերականգնման անհրաժեշտությունը հաշվի առնելով՝ աշխատանքի մեջ փորձ է կատարվել հիմնավորելու առանձին դեպքերում բարենպաստ վարչական ակտի վիճարկման հնարավորության նախատեսումը:

**Յեռագոտության տեսական և գործնական նշանակությունը:**

Յեռագոտության նշանակությունը, առաջին հերթին, դրսևորվում է նրանում, որ ատենախոսությունը վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման ինստիտուտը կազմող իրավական նորմերի ամբողջական ուսումնասիրմանն ուղղված աշխատանք է, որում փորձ է արված վերհանելու նաև գործնական բնույթի խնդիրներ և դրանց հաղթահարման նպատակով ներկայացնելու առաջարկներ: Պայմանավորված դրանով՝ ատենախոսությունն ունի գործնական նշանակություն վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավանորմերի կիրառման պրակտիկայի կատարելագործման առումով, ինչպես նաև այն համատեքստում, որ դրանում հնչեցված առաջարկները կարող են հաշվի առնվել օրենսդրական փոփոխությունների կատարելիս:

Բացի այդ, ատենախոսությունը ընդգրկում է տեսական բնույթի եզրահանգումներ, որոնք կարող են օգտագործվել այնպիսի դասընթացներում, որոնց դասավանդման առարկան առնչվում է վարչարարությանն ընդհանրապես և վարչարարությամբ պատճառված վնասի հատուցմանը՝ մասնավորապես:

**Յեռագոտության արդյունքների փորձարկումը:**

Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնում: Յեռինակը ատենախոսության հիմնական մասերի շարադրման ընթացքում մշտապես կապ է պահպանել իր գիտական ղեկավարի, ինչպես նաև ամբիոնի անդամների հետ, և տարբեր առանցքային դրույթներ ատենախոսության մեջ ամրագրվել են նախապես համաձայնեցնելուց հետո:

Ատենախոսության էությունն արտացոլող գաղափարների շուրջ հեղինակը հանդես է եկել գիտական ելույթներով, և դրանք արտացոլվել են տպագրված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել տարբեր ամսագրերում:

**Ատենախոսության կառուցվածքը:**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 10 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԼ ԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**Ներածության մեջ** հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի մշակվածության աստիճանը, հեռագոտության նպատակը և խնդիրները, հեռագոտության օբյեկտը և առարկան, հեռագոտության աղբյուրագիտական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, գործնական և տեսական նշանակությունը, ատենախոսության արդյունքների փորձարկումը և դրա կառուցվածքը, ձևակերպված են պաշտպանության ներկայացվող դրույթները:

**Ատենախոսության առաջին գլուխը՝** «Վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության իրավական և փաստական հիմքերն ու պայմանները» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից:

**Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝** «Վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության իրավական հիմքերը» վերտառությամբ, հեղինակը համեմատական վերլուծության է ենթարկել քաղաքացիաիրավական

պատասխանատվություն և վարչարարություն ամբ պատճառված վնասի համար պատասխանատվություն ինստիտուտները՝ եզրահանգելով, որ վերջինիս բնորոշ է քաղաքացիաիրավական պատասխանատվությունը հատուկ գործառույթների իրագործումը, վարչարարություն ամբ պատճառված վնասի հատուցումը պատկանում է հանրային իրավունքի ոլորտին, և նույնիսկ առանձին հարցերի կապակցությամբ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ ամրագրված նորմերի կիրառումը չի կարող հիմք լինել վարչարարություն ամբ պատճառված վնասի համար պատասխանատվությունը քաղաքացիաիրավական պատասխանատվություն հետ նույնացնելու համար:

**Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝** «վարչարարություն ամբ պատճառված վնասի համար պատասխանատվություն առաջացման հիմքը և պայմանները» վերտառությամբ, ատենախոսը դարձյալ գուցահեռներ է անցկացրել քաղաքացիաիրավական պատասխանատվություն առաջացման փաստական հիմքի և պայմանների հետ: Հեղինակը եզրահանգել է, որ վարչարարություն ոլորտում վնաս պատճառելու հանգամանքն ինքնին վարչարարությունը չի դարձնում ոչ իրավաչափ, և դրա իրավաչափության հարցը պետք է գնահատվի իրավունքի այն ճյուղի նորմերով, որի շրջանակներում կատարվում է վնասի հանգեցրած գործողությունը: Հեղինակը հիշյալ համատեքստում անդրադարձել է նաև վարչարարություն ամբ վնաս պատճառելու մեջ մեղքի հետ կապված խնդրին և ընդգծել, որ վնասի հատուցման առումով մեղքի առկայությունը չի կարևորվում, քանի որ վարչարարությունը ոչ իրավաչափ ճանաչելն արդեն իսկ ենթադրում է մեղքի առկայությունը և մնացյալ պայմանների առկայության դեպքում բավարար է վնասը հատուցելու համար: Հեղինակը քննարկել է նաև վարչարարություն ամբ պատճառված վնասի հատուցման համար անհրաժեշտ փաստական հանգամանքների ապացուցման բեռի բաշխման հարցը և եզրակացրել, որ ապացուցման բեռի բաշխումը կատարվում է այլ, քան քաղաքացիաիրավական հարաբերությունների ոլորտում գործող կանոններով: Արդյունքում հեղինակը եզրակացրել է, որ քաղաքացիաիրավական պատասխանատվությունը վերաբերող ընդհանուր բնույթ ունեցող նորմերը վարչարարություն ամբ պատճառված վնասի հատուցման նկատմամբ կարող են կիրառելի լինել միայն այն ծավալով, որքանով չեն հակասում վարչարարություն ամբ պատճառված վնասի հատուցման համար օրենսդրությամբ սահմանված հատուկ նորմերին:

**Ատենախոսության երկրորդ գլուխը`** «Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության դատական կարգով վիճարկումը և դրանցով պատճառված վնասի հատուցման առանձնահատկությունները» վերտառությունամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

**Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում`** «Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկման գործերով ՀՀ վարչական դատարանի դատական ակտերի իրավական ուժը» վերտառությունամբ, հեղինակը քննարկում է նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտերի քննությանը և եզրակացնում, որ դրանք համարվում են նորմատիվ իրավական ակտեր: Այնուհետև հեղինակի կողմից առաջ է քաշվել այն միտքը, որ ՀՀ վարչական դատարանին պետք է վերապահվի վիճարկվող նորմատիվ իրավական ակտն իր կողմից տրված բովանդակությամբ իրավաչափ ճանաչելու լիազորություն: Այդպիսի լիազորություն նախատեսելը հիմնավորվում է այն հանգամանքով, որ այդ եղանակով հնարավորություն կապահովվի կանխելու վիճարկվող նորմատիվ ակտի դրույթի ոչ իրավաչափ կիրառումը:

**Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում`** «Նորմատիվ իրավական ակտի իրավաչափության վիճարկման գործով ՀՀ վարչական դատարանի դատական ակտի նշանակությունը վարչարարությունամբ պատճառված վնասի հատուցման համար» վերտառությունամբ, ատենախոսը, նախևառաջ, քննարկում է այն հարցը, թե արդյոք նորմատիվ ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտն օժտված է կատարողականության հատկանիշով և հանգում այն եզրակացության, որ այդ դատական ակտի կատարման ներքո պետք է հասկանալ դրանով անվավեր ճանաչված նորմատիվ ակտի դրույթի վրա հիմնված վարչական ակտերի վերանայումը:

Անդրադառնալով նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտի հետադարձ գործողությանը` հեղինակն արձանագրում է, որ այդ դատական ակտն հետադարձ ուժ տալու դեպքում այն դառնում է նոր հանգամանք, որի հիմքով օրենքով սահմանված կարգով վերանայվում են դրա օրինական ուժի մեջ մտնելուն նախորդող երկու տարվա ընթացքում ընդունված վարչական և դատական ակտերը: Իսկ ինչ վերաբերում է դատական ակտին հետադարձ ուժ չտալուն, ապա նման դեպքերում այն հիմք է դառնում միայն անբողոքարկելի չդարձած վարչական ակտերի վերանայման համար: Հիշյալ համատեքստում ատենախոսն այն գաղափարն է առաջադրել, որ դատական ակտին հետադարձ ուժ չտրվելու դեպքում ևս այնպես,

ինչպես հետադարձ ուժ տրվելու դեպքում, այն պետք է հիմք լինի նաև օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի բեկանման համար, և այդ տեսանկյունից գործող օրենսդրական կարգավորումներն այն մասով, որ անվավեր ճանաչման ենթակա են համարում միայն անբողոքարկելի չդարձած վարչական ակտերը, վերանայման կարիք ունեն:

Անդրադառնալով նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչվելուց հետո վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցման հարցին՝ հեղինակը եզրակացրել է, որ վնասի հատուցում պահանջելու իրավունքն անձի մոտ ծագում է այն պահից, երբ անվավեր է ճանաչվել նաև նորմատիվ ակտի՝ անվավեր ճանաչված դրույթի կիրառմամբ ընդունված և վնաս պատճառած վարչական ակտը: Յետևաբար, գուտ միայն նորմատիվ ակտի անվավեր ճանաչումը դեռևս բավարար նախապայման չէ վնասի հատուցում ստանալու համար, եթե առկա է այդ նորմատիվ ակտի կիրառմամբ ընդունված վարչական ակտ:

Այնուհետև հեղինակը քննարկման առարկա է դարձնում այն հարցը, թե ինչպես պետք է իրականացվի վնասի հատուցումն այն դեպքերում, երբ դրա առաջացումն արդյունք է ոչ թե անվավեր ճանաչված նորմատիվ ակտի կիրառման, այլ դրա՝ անձանց կողմից իրենց իրավաչափ գործողության ներքո իրացման: ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը վնասի հատուցում ստանալու հնարավորություն նախատեսում է միայն նորմատիվ ակտի կիրառման դեպքերում, և որևէ կարգավորում չի սահմանում նորմատիվ ակտի իրացմամբ պատճառված վնասի հատուցման կապակցությամբ: Հեղինակը եզրակացնում է, որ այդ առումով առկա է իրավական բաց, որը ենթակա է լրացման:

**Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝** «Օրենքով նախատեսված դեպքերում նորմատիվ իրավական ակտ չընդունելու անգործության, նորմատիվ իրավական ակտի նախագծի, ինչպես նաև բարենպաստ վարչական ակտի վիճարկման հնարավորությունը ՀՀ օրենսդրությամբ» վերտառությամբ, ատենախոսն անդրադառնում է այն դեպքերի քննարկմանը, երբ օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում վարչական մարմինը չի ընդունում ենթաօրենսդրական նորմատիվ ակտ, և տվյալ հարցը մնում է չկարգավորված: Նման դեպքերում նույնպես անձի իրավունքները կարող են խախտվել, կամ կարող է դրանց խախտման սպառնալիք առաջանալ: Այդ համատեքստում հեղինակը քննարկել է այն հարցը, թե տվյալ դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված որ հայցատեսակով անձը կարող է իրականացնել իր իրավունքների պաշտպանությունը:

Յեղիևակը եզրակացրել է, որ նորմատիվ իրավական ակտի ընդունմանը վարչական մարմինն ներկայիս օրենսդրական կարգավորումներով հնարավոր չէ պարտավորեցնել ոչ պարտավորեցման, ոչ գործողության կատարման հայցի միջոցով: Յեղիևակը նշել է, որ որպես այդպիսի հայցատեսակ վերապահումով կարելի է դիտել գործողության կատարման հայցը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նորմատիվ ակտի ընդունումը փոփոխություններ է առաջացնում նաև անձի փաստական կարգավիճակում: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ գործող օրենսդրությամբ անձի համար փաստական հետևանքներ առաջացնող գործողությունը, որը կատարմանը վարչական մարմինը կարող է պարտավորեցվել գործողության կատարման հայցով, և նորմատիվ ակտի ընդունմամբ եզրափակվող գործունեությունը վարչարարության երկու առանձին ուղղություններ են, ուստի նորմատիվ ակտի ընդունմանը վարչական մարմինն գործողության կատարման հայցի միջոցով պարտավորեցնելը կարող է ընդունելի համարվել միայն տեսականորեն, սակայն ոչ գործող օրենսդրական կարգավորման տեսանկյունից: Այդ համատեքստում հեղիևակն արձանագրել է, որ նպատակահարմար է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով որպես գործողության կատարման հայցի առանձին առարկա սահմանել նորմատիվ ակտի ընդունմանը պարտավորեցնելը:

Սույն պարագրաֆում ատենախոսը նաև այն միտքն է արտահայտել, որ վիճարկման հնարավորությունն պետք է նախատեսվի նաև ՀՀ վարչական դատավարության կարգով վիճարկման ենթակա նորմատիվ ակտերի նախագծերի կապակցությամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կարևորել անձանց իրավունքների հետագա խախտման հնարավորության բացառումը:

Սույն պարագրաֆի շրջանակներում հեղիևակն անդրադարձել է նաև այն վարչական ակտերի վիճարկման հնարավորությանը, որոնք, թեև անձին տրամադրում են վերջինիս կողմից հայցվող իրավունքը, սակայն ոչ այն հիմնավորումներով, որոնք վերջինս է մատնանշել: Նման դեպքերում, եթե անձը գտնում է, որ այդ հիմնավորումները կարող են խախտել իր իրավունքները այլ անձանց հետ իրավահարաբերությունների շրջանակում, ապա վերջինս պետք է հնարավորություն ունենա վարչական ակտը վիճարկելու դրա ընդունման հիմնավորումների մասով: Սակայն ՀՀ գործող օրենսդրությունն անձին զրկում է այդ հնարավորությունից, քանի որ վիճարկելու հնարավորություն է վերապահում միայն

միջամտող և զուգորդվող վարչական ակտերի առնչությամբ, իսկ անձի դիմումի բավարարման մասին վարչական ակտը՝ թեկուզև այլ հիմնավորումներով, համարվում է բարենպաստ վարչական ակտ: Այս կապակցությամբ հեղինակը հիմնավորել է, որ բարենպաստ վարչական ակտով տրված այլ հիմնավորումները պետք է դիտել որպես միջամտող դրույթներ, որպեսզի անձը հնարավորություն ունենա բողոքարկելու նաև դրանք:

**Ատենախոսության երրորդ գլուխը՝** «Վարչարարության մեջ պատճառված վնասի համար պատասխանատվության իրացման գործնական խնդիրները» վերտառության մեջ, բաղկացած է հինգ պարագրաֆներից:

**Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝** «Վարչական ակտի վարչական բողոքարկման եվ դատական կարգով վիճարկման ժամկետների վերանայման չափանիշները» վերտառության մեջ, հեղինակը քննարկում է վարչական ակտի վիճարկման հայցի ներկայացման ժամկետի բնույթի հարցը, այնուհետև առաջադրում այն գաղափարը, որ վարչական ակտի վարչական բողոքարկման և դատական կարգով վիճարկման ժամկետները անհրաժեշտ է միասնականացնել: Խնդիրն այն է, որ ՀՀ օրենսդրության մեջ վարչական բողոքարկման համար սահմանված է առավելագույնը մեկ տարի և երկու ամիս ժամկետ՝ հաշվարկված վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից: Այդ ժամկետը լրանալուց հետո անձը զրկվում է վարչական կարգով վարչական ակտը բողոքարկելու հնարավորությունից, եթե նույնիսկ այն բաց է թողել հարգելի պատճառով: Մինչդեռ վիճարկման հայցով դատարան դիմելու պարագայում նաև վերոհիշյալ ժամկետը լրանալուց հետո անձն ունի հնարավորություն բաց թողնված ժամկետը վերականգնելու: Այս առումով առաջարկվել է օրենսդրության մեջ սահմանելու վարչական ակտն անբողոքարկելի դառնալու միասնական չափանիշներ՝ անկախ այն հանգամանքից, թե խոսքը վերաբերում է վարչական, թե դատական կարգով վիճարկմանը:

**Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝** «Վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին հայցի հարուցումը, վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտի եվ դատարանի վճռի կատարումը» վերտառության մեջ, ատենախոսը, առաջին հերթին, քննարկել է այն հարցը, թե վարչական մարմնի կողմից վնասի հատուցման վերաբերյալ վարչական վարույթ չհարուցվելու և չիրականացվելու դեպքում անձը որ հայցատեսակով պետք է դիմի դատարան վնասի հատուցում ստանալու նպատակով: Վերլուծության արդյունքում հեղինակն արձանագրել է, որ

տվյալ դեպքում բացակայում են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցատեսակներից որևէ մեկի ներկայացման համար անհրաժեշտ հիմքերը, և ստացվում է մի իրավիճակ, երբ անձը գործող կարգավորումների տեսանկյունից չի ունենում իր իրավունքների պաշտպանության իրավական հնարավորություն: Նման իրավիճակի առաջացումը կանխելու նպատակով հեղինակի կողմից հիմնավորվել է, որ օրենքով սահմանված ժամկետում վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցմանն ուղղված վարչական վարույթ չհարուցելը և չիրականացնելը պետք է մեկնաբանվի որպես վնասի հատուցումից վարչական մարմնի կողմից հրաժարում, որից հետո անձը կստանա հնարավորություն դատական կարգով վարչական մարմնին պարտավորեցնելու վնասի հատուցման: Այդ կապակցությամբ հեղինակի կողմից կատարվել է համապատասխան օրենսդրական փոփոխություն կատարելու առաջարկություն:

Սույն պարագրաֆում ատենախոսը բարձրացրել է նաև այն հարցը, թե վնասի հատուցման վերաբերյալ ընդունված վարչական ակտերն ինչպես պետք է կատարվեն: Հեղինակն արձանագրել է, որ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգը վերաբերում է միայն բյուջեից ուղղակիորեն գումարի բռնագանձում նախատեսող դատական ակտերի կատարմանը, իսկ վարչական դատավարության կարգով վնասի հատուցմանը պարտավորեցնելու պարագայում վարչական մարմնինը պետք է ընդունի վնասի հատուցման մասին վարչական ակտ, որի կատարման կարգը, փաստորեն, ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ: Այս կապակցությամբ առաջարկվել է վարչական ակտը ներկայացնել անմիջականորեն ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ վնասի հատուցում տրամադրելու նպատակով:

Քննարկելով ոչ իրավաչափ վարչարարության հետևանքների վերացման հարցը՝ հեղինակը եզրահանգել է, որ շատ դեպքերում ոչ իրավաչափ վարչարարության հետևանքների վերացումը հնարավոր չէ վարչական ակտ ընդունելու եղանակով, և վարչական մարմնից պահանջում է տարաբնույթ գործողությունների կատարում: Ելնելով այդ նկատառումից՝ առաջարկվել է վարչարարության հետևանքները վերացնելու նպատակով վարչական մարմնին անհրաժեշտ գործողություններ կատարելու լիազորություն վերապահել, որոնք կապված չեն վարչական ակտի ընդունման հետ:

**Երրորդ գլխի երրորդ պարագրաֆում**՝ «Վնասի հատուցումը վնաս պատճառած վարչարարությունն իրականացրած վարչական



մարմնի իրավահաջորդության դեպքում» վերտառույթամբ, հեղինակը քննարկում է այն խնդիրը, թե ինչպես պետք է լուծվի վնասի հատուցման հարցը վարչական մարմնի վերակազմակերպման կամ լուծարման պարագայում: Հեղինակը եզրահանգել է, որ ոչ վերակազմակերպումը, ոչ լուծարումը չեն կարող հիմք լինել պետությանը կամ համայնքին վարչարարությանմբ պատճառված վնասի համար պատասխանատվությանը ազատելու համար: Տվյալ պարագայում պետք է հիմք ընդունել այն հանգամանքը, թե որ վարչական մարմնին է փոխանցվել այն լիազորությունը, որի իրականացմամբ պատճառվել է վնասը: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր չէ պարզել այդ մարմնին, կամ տվյալ լիազորությունը վերացվել է, ապա վնասի հատուցման նպատակով անձը պետք է հնարավորություն ունենա դիմում ներկայացնելու ՀՀ ֆինանսների նախարարությանը:

**Երրորդ գլխի չորրորդ պարագրաֆում`** «Վարչական ակտի գոյության նկատմամբ վստահությանը պատճառված վնասի հատուցումը» վերտառույթամբ, հեղինակը, քննարկելով վարչական ակտի գոյության նկատմամբ վստահության պաշտպանության ինստիտուտի էությունը, եզրահանգում է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վստահության պաշտպանության համատեքստում վարչական ակտն անվավեր ճանաչելու հարցը լուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, թե ով ավելի մեծ վնաս կկրի` վարչական ակտի հասցեատերը` վերջինիս համար բարենպաստ վարչական ակտն անվավեր ճանաչելու դեպքում, թե երրորդ անձը` վարչական ակտն ուժի մեջ թողնելու պարագայում: Այնուհետև հեղինակն արձանագրել է, որ ՀՀ օրենսդրությամբ լուծված է միայն վարչական ակտի հասցեատիրոջ վստահությանը պատճառված վնասի հատուցման հարցը վարչական ակտն անվավեր ճանաչելու դեպքում, և որևէ կարգավորում նախատեսված չէ այն առնչությամբ, թե ինչպես պետք է լուծվի երրորդ անձի իրավունքների պաշտպանության խնդիրը վարչական ակտն անվավեր չճանաչվելու պարագայում: Այս առումով առկա է իրավական բաց, որը ենթակա է լրացման:

**Երրորդ գլխի հինգերորդ պարագրաֆում`** «Հետադարձ պահանջի ներկայացումը վնաս պատճառած վարչարարությանն իրականացրած պաշտոնատար անձ իդեմ» վերտառույթամբ, հեղինակը բացահայտել է հետադարձ պահանջի ներկայացման կապակցությամբ ձևավորվող պարտավորական իրավահարաբերությանը: Այնուհետև հեղինակն ընդգծել է, որ պետության և վնաս պատճառած

վարչարարությունն իրականացրած պաշտոնատար անձի միջև հետադարձ պահանջի ներկայացման կապակցությամբ ձևավորվում են մասնավոր-իրավական հարաբերություններ, որոնց շրջանակում պետությունն իր պահանջը պաշտոնատար անձի դեմ ուղղում է որպես ֆիզիկական անձի:

Սույն պարագրաֆում հեղինակն անդրադարձել է նաև այն խնդրին, թե արդյո՞ք պաշտոնատար անձը երրորդ անձի կարգավիճակով պետք է ներգրավվի վնասի հատուցման վերաբերյալ դատական գործի քննությանը: Ատենախոսը եզրակացրել է, որ, քանի որ այդ գործի քննության արդյունքում կայացվելիք դատական ակտը կարող է ազդեցություն ունենալ պաշտոնատար անձի իրավունքների և պարտականությունների վրա, ուստի վերջինիս պետք է ներգրավել գործի քննությանը:

Սույն պարագրաֆում հեղինակը, անդրադառնալով պաշտոնատար անձի գործողություններում դիտավորության կամ անփութության առկայության հարցին, նշել է, որ պաշտոնատար անձի կողմից կիրառման ենթակա իրավանորմերի սխալ մեկնաբանումը ևս կարող է հիմք լինել նրա գործողություններում անփութության առկայությունը հավաստելու համար:

**Եզրակացության մեջ** ընդգրկված են հետազոտության հիմնական արդյունքներն ու հեղինակի եզրահանգումները, ինչպես նաև օրենսդրական փոփոխությունների առաջարկները:

Ի հավելումն պաշտպանության ներկայացվող դրույթների՝ այդ եզրահանգումներն ու առաջարկներն ամփոփ հանգում են հետևյալին.

1. Վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվությունը չի կարող նույնացվել քաղաքացիաիրավական պատասխանատվության հետ, քանի որ այն օժտված չէ քաղաքացիաիրավական պատասխանատվությանը հատուկ նախական խիչ, դաստիարակաչական, փոխհատուցման և պատժիչ գործառնությունների:

2. Պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործողություններով վնասի պատճառման ոչ բոլոր դեպքերում է հարցը ենթակա կարգավորման հանրային-իրավական նորմերով: Պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ վարչարարությունն չհանդիսացող, այլ տեխնիկական և այլ բնույթի գործողություններով պատճառված վնասի հատուցումն իրականացվում է քաղաքացիական օրենսդրության հիման վրա:

3. Քաղաքացիական իրավունքում գործող «գլխավոր դելիկտի» կանոնը, ըստորի՝ վնասի պատճառման յուրաքանչյուր դեպք պետք է համարել իրավախախտում և պատճառված վնասի հատուցում պահանջելու իրավունքի ծագման հիմք, վարչարարության մեջ պատճառված վնասի պարագայում չի կարող գործել: Այստեղ այն բախվում է վարչարարության իրավաչափության սկզբունքին, որին էլ պետք է տրվի առաջնայնությունը: Հետևաբար վարչարարության իրականացման ժամանակ վնասների առաջացումն ինքնին չի վկայում դրա ոչ իրավաչափ լինելու մասին: Վարչարարությունը ոչ իրավաչափ ճանաչելու համար անձի սուբյեկտիվ իրավունքների խախտումից բացի, անհրաժեշտ է նաև օբյեկտիվ իրավունքի խախտում: Քաղաքացիական իրավունքում կարևորվում է ոչ թե վնասի հանգեցրած գործողության բնույթը, այլ գուտ միայն վնասի առաջացման փաստը:

4. Եթե քաղաքացիական իրավունքում վնասի հատուցման պարտավորությունից ազատվելու համար անհրաժեշտ է ապացուցել վնասի առաջացման մեջ մեղքի բացակայությունը, ապա վարչարարության պարագայում վնասի առաջացման մեջ մեղքի բացակայության ապացուցումն իմաստազուրկ է, քանի որ, ինչպես նշվեց, վարչական մարմինը կարող է և նախապես իմանալ վնասի առաջացման հնարավորության մասին: Հետևաբար այստեղ վարչական մարմնի պաշտոնատար անձի մեղքի հարցը վնասի պատճառման դաշտից տեղափոխվում է արարքի հակաիրավականության դաշտ: Դրանից բխում է, որ վարչարարության մեջ պատճառված վնասի դեպքում վարչական մարմնի պաշտոնատար անձի մեղքի հարցը չունի այն նույն սկզբունքային նշանակությունը, ինչ քաղաքացիական իրավական պատասխանատվության կիրառման ժամանակ, քանի որ այն, ըստ էության, կլանվում է արարքի հակաիրավականության մեջ և մշտապես առկա է, եթե վարչարարությունը ճանաչվել է ոչ իրավաչափ:

5. ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված վնաս պատճառելուց բխող պարտավորություններին վերաբերող ընդհանուր դրույթները վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցման նկատմամբ կիրառելի են այն ծավալով, որքանով չեն հակասում վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցման համար օրենսդրորեն սահմանված հատուկ դրույթներին:

6. Նորմատիվ իրավական ակտի իրավաչափության ստուգման արդյունքում ՀՀ վարչական դատարանի կողմից նորմատիվ

իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին կայացված որոշումնունի և՛ իրավակիրառ, և՛ իրավաստեղծ բնույթ. այն ուղղված է իրավական նորմերի վերացմանը:

7. Նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին ՀՀ վարչական դատարանի դատական ակտի կատարում ասելով պետք է հասկանալ հետագայում անվավեր ճանաչված դրույթի չկիրառումը, ինչպես նաև այդ դրույթի կիրառմամբ ընդունված անհատական ակտերի վերանայումն օրենքով սահմանված կարգով:

8. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ մասերի համադրված վերլուծություներից բխում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին ՀՀ վարչական դատարանի դատական ակտին հետադարձ ուժ տալը նշանակում է, որ նորմատիվ ակտը ճանաչվում է ուժը կորցրած հենց ուժի մեջ մտնելու պահից: Հենց այդ պահին նախորդող վերջին երկու տարվա ընթացքում ընդունված վարչական և դատական ակտերն էլ ենթակա են վերանայման: Սակայն խնդիրն այն է, որ վարչական դատարանի որոշմանը հետադարձ ուժ տալու դեպքում նորմատիվ ակտի ուժի մեջ մտնելու և ուժը կորցնելու պահերը համընկնում են, քանի որ այն անվավեր է ճանաչվում ուժի մեջ մտնելու պահից: Արդյունքում ներկայիս օրենսդրական կարգավորմամբ ստացվում է, որ պետք է վերանայվեն նորմատիվ ակտի ուժի մեջ մտնելուն նախորդող վերջին երկու տարվա ընթացքում ընդունված վարչական և դատական ակտերը, որպիսի կարգավորումը, բնականաբար, անտրամաբանական է: Այդ կապակցությամբ առաջարկում ենք ՀՀ սահմանադրական դատարանի համանման որոշման օրինակով վերանայման ենթակա դիտել ոչ թե նորմատիվ իրավական ակտի ուժը կորցնելուն, այլ ՀՀ վարչական դատարանի որոշումը հրապարակելուն նախորդող երկու տարվա ընթացքում ընդունված վարչական և դատական ակտերը:

9. Գտնում ենք, որ պետք է նախատեսվի ոչ միայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածով սահմանված նորմատիվ ակտերի, այլ նաև դրանց նախագծերի իրավաչափության ստուգման հնարավորություն:

10. Վնաս պատճառած վարչական մարմնի գոյության դադարման դեպքում վնասի հատուցման պարտավորությունը պետք է անցնի այն վարչական մարմնին, որի իրավասությունը վերապահվել է վնասի հանգեցրած լիազորության իրականացումը: Այդ լիազորության դադարման, ինչպես նաև վնաս պատճառած վարչական մարմնին որոշելու անհնարինության դեպքում

վնասի հատուցման դիմումը կարող է ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարությանը:

11. ՀՀ օրենսդրությամբ կարգավորվում է այն հարցը, թե ինչպես պետք է լուծվի վարչական ակտի գոյությանը վստահելու հետևանքով անձի կրած վնասի հատուցման հարցը, սակայն կարգավորված չէ այն դեպքը, երբ երրորդ անձի իրավունքները խախտող ոչ իրավաչափ վարչական ակտը ուժի մեջ է մնում դրա հասցեատիրոջ վստահությանը պաշտպանություն տրամադրելու հիմքով: Երրորդ անձը, փաստորեն, վնաս է կրում այն բանի հետևանքով, որ ոչ իրավաչափ վարչական ակտն ուժի մեջ է մնում ակտի հասցեատիրոջ վստահության պաշտպանության հիմքով: Վերջինիս կրած վնասի հատուցման անհրաժեշտությունը ելնելով՝ առաջարկում ենք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 110-րդ հոդվածի 1-ին մասում կատարել լրացում առ այն, որ վնասի հատուցման համար դիմելու իրավունք ունի ոչ միայն վարչական ակտի գոյությանը վստահած անձը, այլև այն անձը, ով վնաս է կրել վարչական ակտի նկատմամբ վստահության պաշտպանության հիմքով այն անվավեր ճանաչելու հետևանքով: Ուստի քննարկվող հոդվածում «ոչ իրավաչափ վարչական ակտի գոյությանը վստահելու հետևանքով» բառակապակցությունն ից հետո առաջարկում ենք ավելացնել «կամ վարչական ակտի գոյության նկատմամբ վստահության պաշտպանության հիմքով այն անվավեր ճանաչելը մերժելու հետևանքով» բառակապակցությունը:

**Առենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. Նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին ՀՀ վարչական

դատարանի դատական ակտի նշանակությունը վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման համար // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ, 2016, էջեր 46-66,

2. Վարչական ակտի վարչական բողոքարկման և դատական կարգով վիճարկման ժամկետները // Արդարադատություն, Եր., 2016, (33), էջեր 48-54,

3. Վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման հիմքը և պայմանները // Օրինականություն, Եր., 2016, № 92, էջեր 47-54,

4.Վնասի հատուցումը վնաս պատճառած վարչարարությունն  
իրականացրած վարչական մարմնի իրավահաջորդության  
դեպքում// Այլ ընտրանք, Եր., 2016թ., № 2, Էջեր 84-96:

## **ПАРГЕВ САРОЯН ВОЛОДЯЕВИЧ**

### **ВОЗМЕЩЕНИЕ ВРЕДА, ПРИЧИНЕННОГО АДМИНИСТРИРОВАНИЕМ**

#### **РЕЗЮМЕ**

Настоящая диссертационная работа на соискание ученой степени кандидата юридических наук посвящена целостному и всестороннему изучению и анализу правовых норм, регулирующих возмещение вреда, причиненный администрированием, а также выявлению различных вопросов, возникающих в ходе получения возмещения вреда, причиненного администрированием и их возможного решения.

Ряд проблем, касающихся возмещению вреда, причиненного администрированием, был изучен в научных работах разных авторов. Ряд корневых вопросов, касающихся возмещению вреда, причиненного администрированием, стали также объектом исследований кандидатских и докторских диссертационных работ. Тем не менее, следует заметить, что институт возмещения вреда, причиненного администрированием, изучен не в достаточной мере, и полноценная работа, направленная всестороннему изучению рассматриваемого института, отсутствует.

Об актуальности диссертационной темы свидетельствует и то обстоятельство, что правовые нормы, касающиеся возмещения вреда, причиненного администрированием, во многих случаях были комментированы кассационным судом РА, и возникла необходимость переосмысления рассматриваемых правовых норм с точки зрения правовых позиций, выраженных в решениях кассационного суда РА.

В рамках настоящей работы автор поставил перед собой цель подвергнуть целостному исследованию вопросы, имеющие теоретическое и практическое значение, возникающие в процессе возмещения вреда, причиненного администрированием и на основании этого разработать предложения, направленные на совершенствование действующего законодательства и правоприменительной практики РА.

В рамках данной работы автор детально изучил вопросы, относящиеся к правовым и фактическим основаниям возникновения ответственности за вред, причиненный администрированием, выявил особенности условий возникновения ответственности.

В отдельной главе автор рассмотрел влияние судебных актов по делам об оспаривании правомерности нормативно-правовых актов на административные акты, принятые с применением оспариваемых нормативных актов и причинившие вред, раскрыл сущность обратного действия судебных актов, а также сделал полноценный акцент на ряд иных актуальных вопросов, связанных с возмещением вреда, причиненного оспариваемым нормативным актом.

Со стороны автора отдельным образом подверглись изучению некоторые проблемные вопросы, возникающие в процессе возмещения вреда, причиненного администрированием и считающиеся значимыми вопросы, связанные с сроками оспаривания причинившего вред административного акта, возбуждением и осуществлением административного процесса о возмещении вреда, исполнением административного акта, принятого в ходе административного процесса, устранением последствий причинившего вред администрирования, возмещением вреда, причиненного праву доверия в отношении существования административного акта и т.д.

Автор не ограничился лишь относящимися к теме теоретическими источниками, а исследовал также судебную практику в отношении обсуждаемых вопросов, сформировавшуюся в РА.

В результате исследования автором не только были сделаны выводы теоретического характера, но и разработан и представлен ряд практических предложений, направленных на совершенствование законодательства и правоприменительной практики.

**PARGEV VOLODYA SAROYAN**

**COMPENSATION FOR DAMAGE CAUSED BY ADMINISTRATION**

**SUMMARY**



This dissertation submitted for degree of candidate of juridical sciences is dedicated to comprehensive study and analysis of legal norms, stipulating the compensation for damage caused by administration, as well as to the problems which emerge in the process of obtaining compensation for damage caused by administration and the ways of possible solutions thereof.

A number of issues related to compensation for damage caused by administration were examined in scientific works of different authors. Various key issues related to the subject of dissertation were the subject of doctoral and post-doctoral dissertations. However, it costs to mention that the institute of compensation for damage caused by administration is still not sufficiently explored, and there is no entire work on comprehensive research of the institute.

The relevance of the subject is also evidenced by the fact that a number of legal norms stipulating compensation for damage caused by administration were construed by the Court of Appeal of the Republic of Armenia, in which case a necessity emerged to redefine those legal norms within the perspective of the legal views reflected in the decisions of the Court of Appeal of the Republic of Armenia.

In the framework of this dissertation the author has set a goal to expose a comprehensive study of issues of theoretical and practical importance arising in the process of compensation for damage caused by administration and on the basis of this to elaborate on proposals aimed at improving the identities of the legislation and law enforcement practice of the Republic of Armenia.

In the framework of this dissertation the author researched in detail the issues related to the legal and factual grounds for the occurrence of liability for damage caused by administration and revealed the special features of liability.

In a separate chapter, the author examined the influence of judicial acts in cases challenging the legality of legal acts by the enforcement of which accepted administrative acts that caused damage to regulations and revealed the essence of retroactive effect of judicial acts, and also made a full focus on a number of other relevant issues related to compensation for damage caused by the contested legal act.

In an individual way the author underwent in the study of some of the problematic issues that arise in the process of compensation for damage caused by administration and are considered significant, issues related to challenging deadlines of the administrative act which caused damage, initiation and conduct of administrative proceedings for damage, the execution of the administrative act adopted during the administrative process, the elimination of the consequences of

the administration which caused damage, compensation for damage caused to the trust right to the existence of an administrative act, etc.

The author is not limited only to relate to the theme of theoretical sources, but as well examined the judicial practice formed in the Republic of Armenia.

As a result of the research the author made conclusions not only of a theoretical character, but also practical suggestions aimed at improving the legislation and law enforcement practice.